

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 60 ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ

Կահիրե

Ջերմ սրտով ողջունում ենք Ձեր կենաց վաթսունամյակը և Ձեր մոտ քառասուն տարիների ծառայությունը մեր սուրբ Եկեղեցուն, որից երեսուն և երեք տարիները նվիրեցիք Եգիպտոսի Տիրախնամ հայոց թեմին և հավատացյալ ժողովրդին:

Ձեզ ճանաչում ենք իբրև մեր Մայր Եկեղեցու ամենահավատավոր, ամենաբազմաշնորհ ու անձնազոհ հոգևոր առաջնորդներից մին, բարձր գնահատելով նաև հավատարիմ աշխատակցությունը Մայր Աթոռիս՝ իբրև անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Ընդունեցեք Մեր բարի մաղթանքները արևշատության ու առողջության և մշտանորոգ ներշնչանք հոգեշեն նորանոր իրագործումների համար:

Սուրբ Էջմիածնից Ձերդ Սրբազնության՝ Մեր սերը, Մեր գնահատանքը և օրհնությունը Աստուծո:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
14 նոյեմբեր 1989 թ.